հանք։ Գլխաւորապէս գոմիշեղէն կը սնուցանեն։ Արօտ չունին որով ոչխարեղէն շատ քիչ կը պահեն։

Գիւղս ունի մի խարխուլ, գեանափոր եկեղեցի, եկեղեցւոյ շուրջն գերեզմանատունն է 1000 ի չափ կոշտ տապանաքարերով։ Մի խաչքար կայ, որոյ վերայ գրուած է «Սեղրակ Ռաճ»։

Գիւղս ևս քահանայ չունի և ոչ ևս ուսուցչի երես տեսած է։

Գիւղիս բնակչաց կէսն մի ցեղ կը կազմեն, որոց քրդեր Գորոներ (գայլեր) կանուանեն. որոց համար մեր վանքի միաբաններ կաւանդեն թէ Գայլ Վահանից սերած են։

Գիւղս նաև տեսած եմ մի թղթեայ ընտիր ձեռագրով գրուած և շատ գեղեցիկ նկարուած բաղմաթիւ պատկերներով մի Աւետարան, որոյ առաջին էջին վերայ գրուած է «Կարապետ էրեց ստացող Ս. Աւետարանիս»։

Ա. նկար.—Դասատիարակ մի նստած է, որոյ առջև երկու մանուկներ կանգնած կան. մին իւր ձեռք դիրք մի բռնած է, որոյ վերան գրուած է «մի նախանձիր ընդ չարս», իսկ միւսին ձեռքը ծաղիկ։

Բ. նկար.—Աբրահամ զԻսահակ զոհելու վերայ է, Յոյն Սաբեկայ ծառէն կախուած է։

Գ. » .—Գաբրիէլ հրեշտակի աւետիսն առ Սուրբ Կոյսն Մարիամ։

Դ. » .—Ծնունդ, հրեշտակաց փառաբանութիւնն, երեք մոգերու երկրպագութիւնը. հովիւներու մին սրինգ կածէ, իսկ միւսն գառն շալակած։